



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

6 փետրվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Ա. Գյուլումյանի

Անդամակցությամբ՝

Ա. Խաչատրյանի

Հ. Նազարյանի

Քննության առնելով Ռուդիկ Խոջոյանի և Արտյոմ Խոջոյանի անհատական
դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց.

1. Ռուդիկ Խոջոյանը և Արտյոմ Խոջոյանը 2020 թվականի հունվարի 20-ին
դիմել են Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2 հոդվածի 9-րդ մասը ճանաչել ՀՀ
Սահմանադրության 1-ին, 3-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ, 80-րդ
և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողները բարձրացնում են ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար սահմանված հայցային վաղեմության ժամկետի իրա-

վաչափության հարց, քանի որ այն հանգեցնում է իրավական անորոշության՝ միաժամանակ խախտելով դիմողի իրավունքները:

Ըստ դիմողների՝ օրենսդրի կողմից սահմանված՝ անձին պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար նախատեսված 1 տարվա դատավարական ժամկետը ողջամիտ և արդարացված չէ: Բացի դրանից, օրենսդիրը ոչ միայն նախատեսել է ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու ժամկետ, այլ նաև այն «ստորադասել» է նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար նախատեսված դատավարական ժամկետին (հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը 3 տարի է):

Դիմողները պնդում են, որ ոչ նյութական վնասը, որը, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի, հոգեկան տառապանք է, որը չի կարող կարգավորվել իմպերատիվ նորմերով և խիստ հստակ դատավարական ժամկետներով, քանի որ հոգեկան տառապանքը, դրա կրման ժամանակահատվածը, դա հաղթահարելու ժամկետները խիստ անհատական են: «Տարբեր մարդիկ տարբեր կերպ կարող են արձագանքել իրենց պատճառված հոգեկան տառապանքին, հետևաբար նաև «վերականգնման» և սեփական իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցների կազմակերպման ժամկետները ևս կարող են տարբերվել»:

Դիմողների համոզմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածն այնքանով, որքանով սահմանում է անձին պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար մեկ տարի ժամկետ, հակասում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում չի իրականացվում գործի դատաքննություն,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և պահպանել Սահմանադրական դատարանի դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածով և 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Ռուդիկ Խոջոյանի և Արտյոմ Խոջոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել Ազգային ժողովին:

Նախագահող՝
Անդամներ՝



6 փետրվարի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-3